ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 ապրիլի 2025թ. թիվ 178-Ա

«ՏԱՇԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԱՀԵ ԱՆԱԽԱՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, 68-րդ հոդվածի 6-րդ մասով և 88-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով «Տաշիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 8.2. կետի 17-րդ ենթակետը, 2023թ. փետրվարի 20-ին ՀՀ Լոռու մարզպետի և Վահե Անախասյանի միջև կնքված աշխատանքային պայմանագրի 3-րդ կետի 3.6 ենթակետի «գ» պարբերությունը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1550-Լ որոշմամբ հաստատված հավելված N 5-ի 20-րդ կետը, ինչպես նաև «Տաշիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջ արտահերթ ընդհանուր ժողովի 2025 թվականի ապրիլի 7-ի թիվ 1 արձանագրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի «Տաշիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Վահե Ձիվանի Անախասյանին 2025 թվականի ապրիլի 7-ից ազատել զբաղեցրած պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2023 թվականի փետրվարի 20-ին կնքված աշխատանքային պայմանագիրը և աշխատանքային պայմանագրի 4.1. կետի համաձայն վճարել երկու ամսվա վարձատրությանը համարժեք փոխհատուցում:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետին՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սույն վարչական ակտը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում ծանուցել հասցեատիրոջը առձեռն կամ պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱՋԱՐՅԱՆ

2025թ. ապրիլի 7
ք.Վանաձոր